



**GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT**  
223 North Jackson St., Glendale, California 91206-4380  
Telephone: (818) 241-3111, Ext. 1208 \* Fax: 818-543-0716

**ԿՐԹԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿ**

## 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Հարգելի ծնողներ և խնամակալներ՝

Բարի գալուստ նոր ուսումնական տարի: Այս տեղեկատվական ձեռնարկը կարևոր տեղեկություններ է պարունակում Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի քաղաքականության, կանոնակարգերի և ընթացակարգերի մասին, որոնք վերաբերում են Կալիֆորնիայի հանրային դպրոց հաճախող երեխայի և ձեր իրավունքներին ու պատասխանատվություններին: Խնդրում ենք վերանայել այս տեղեկատվական ձեռնարկի մեջ ընդգրկված տեղեկությունները և վերադարձնել կցված բոլոր պարտադիր ֆորմերը:

Ձեր երեխայի դպրոցը պետք է վավերացնի, որ յուրաքանչյուր ընտանիք ստացել և վերանայել է այս տեղեկագիրքը: Կան չորս ֆորմեր, որոնք ընտանիքները պետք է ստորագրեն և վերադարձնեն դպրոց:

- Ֆորմ 1 «Ծնողի ծանուցման ստացման վերաբերյալ ծանուցում»
- Ֆորմ 2 «Համընդհանուր գանգատարկման ընթացակարգի վերաբերյալ տարեկան ծանուցում»
- Ֆորմ 3 «Խնամակալության օրենքի վերաբերյալ ծանուցում» է: Ինչպես նաև, դպրոցը պետք է հաստատոգիր ստանա առ այն, որ դուք և ձեր երեխան հասկանում և ընդունում եք
- Ֆորմ 4 «Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից (EIS) օգտվող ծնողի կամ խնամակալի պատասխանատվության վերաբերյալ պայմանագիր»:

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանը հանձնառու է բոլոր դասարանները ապահովել բարձր որակավորում ունեցող ուսուցիչներով: Կրթաշրջանը ամեն ջանք գործադրում է, որպեսզի յուրաքանչյուր դասարանի և առարկայի համար աշխատանքի ընդունի լավագույն ուսուցիչներին: Որպես պետական Title I ծրագրով դրամական միջոցներ ստացող կրթական հաստատություն, կրթաշրջանը պարտավորվում է երաշխավորել, որպեսզի **յուրաքանչյուր** դպրոցի **յուրաքանչյուր** ուսուցիչ ունենա բարձր մասնագիտական որակավորում, ինչպես սահմանված է պետական «**Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի**» օրենքով:

Ավելացնենք նաև, որ Title I ծրագրով գործող դպրոց հաճախող աշակերտների ծնողները իրավունք ունեն տեղեկանալ իրենց երեխայի ուսուցչի մասնագիտական որակավորման մասին: Ինչպես նաև, ծնողները իրավունք ունեն տեղեկություն ստանալ դասարանում ուսումնական հարցերով ուսուցիչներին աջակցող օգնականների մասնագիտական որակավորման մասին: Եթե ձեր երեխան Title I ծրագրով գործող դպրոց է հաճախում, և դուք հավելյալ տեղեկությունների կարիք ունեք, խնդրում ենք կապ հաստատել ձեր դպրոցի տնօրենի հետ:

Ծնորհակալություն ձեր երեխայի կրթության նկատմամբ ձեր կողմից ցուցաբերած հետաքրքրության և ներգրավվածության համար:

Հարգանքներով՝

Քելի Քինգ, Ed.D.  
Գերտեսուչի օգնական  
Կրթական ծառայություններ

**ՖՈՐՄ 1 – ԾՆՈՂԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ  
2019-2020**

**Ճորձ 1-ը** պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈԼՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և վերադարձնեն աշակերտի դպրոցի գրասենյակ:

-----

(Տպագիր գրել) Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
-------------------------------	-----------	--------	----------

Խնդրվում է ստորագրել այս ֆորմը և երեսուն (30) օրվա ընթացքում վերադարձնել ձեր երեխայի դպրոցը: Սրանով հաստատում եմ, որ Կալիֆոռնիայի օրենքի (EC §§ 48982) համաձայն ձեր տեղեկացրել եմ ծնողի և աշակերտի իրավունքների ու պատասխանատվությունների մասին: Ձեր ստորագրությամբ չեմ նշում յուրահատուկ որևէ ծրագրի մասնակցելու ձեր համաձայնությունը, այլ պարզապես հաստատում եմ, որ ստացել եմ օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցագիրը:

-----

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվը
-------------------------------------	----------

**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՖՈՐՄԸ՝ ՍՏԱՑՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**ՖՈՐՄ 2 – ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ  
2019-2020**

**Ճորձ 2-ը** պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈԼՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և վերադարձնեն աշակերտի դպրոցի գրասենյակ:

-----

(Տպագիր գրել) Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
-------------------------------	-----------	--------	----------

Խնդրվում է ստորագրել այս ֆորմը և երեսուն (30) օրվա ընթացքում վերադարձնել ձեր երեխայի դպրոցը: Սրանով դուք հաստատում եմ, որ ստացել եմ Գանգատարկման ընթացակարգի տարեկան ծանուցումը: Ձեր ստորագրությամբ չեմ նշում որևէ հատուկ ծրագրի մասնակցելու ձեր համաձայնությունը, այլ պարզապես հաստատում եմ, որ ստացել եմ օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցագիրը:

-----

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվը
-------------------------------------	----------

**ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՖՈՐՄԸ՝ ՍՏԱՑՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**ՖՈՐՄ 3 – ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ  
2019-2020**

**Տորմ 3-ը** պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈԼՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և վերադարձնեն **աշակերտի դպրոցի գրասենյակը**:

-----  
-----  
-----  
-----

<b>(Տպագիր գրել)</b> Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
--------------------------------------	-----------	--------	----------

Կալիֆոռնիայի օրենքի համաձայն (Ընտանեկան օրենսգրքի հատված 3010), յուրաքանչյուր ծնող հավասարապես իրավասու է իր երեխայի խնամատարության համար: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ֆողաֆականությունն է հետևել Ընտանեկան օրենսգրքի 3010 հատվածին, որի համաձայն և՛ հայրը և՛ մայրը կարող է համապատասխան փաստաթուղթ ներկայացնելով իր երեխային դպրոցից վերցնել կամ նրա առողջական վիճակի, կրթության ու բարեկեցության մասին որոշումներ կայացնել:

Ընտանեկան օրենսգրքի 3025 հատվածի համաձայն չպետք է ոչ-խնամարկու ծնողին մերժել իր երեխայի դպրոցական արձանագրություններին հասանելիություն ունենալուց: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է թույլատրի, որ և՛ հայրը և՛ մայրը հասանելիություն ունենան իրենց գավակի դպրոցական տվյալներին, այդ թվում՝ դպրոցի տիրապետման տակ եղած բժշկական տեղեկագրերին:

Եթե դատարանի կարգադրությամբ սահմանափակվել է երեխայի այցելության կամ խնամակալության կամ երեխայի մասին տեղեկություններ ստանալու ծնողի իրավունքը, դա պետք է լինի երկու ծնողի պատասխանատվությունը՝ անմիջապես դպրոցին տրամադրել դատավորի ստորագրությամբ և դատարանի կողմից կնքված հրամանը: Դատարանի հրամանի պատճենները կարելի է ստանալ դատարանի գրասենյակից, որտեղ կատարվել է կարգադրությունը:

Դատարանի կողմից ստորագրված փաստաթուղթ չլինելու դեպքում, միայն մեկ ծնողի բանավոր կամ գրավոր հայտարարությունը բավարար պատճառ չի լինի, որ դպրոցը մերժի երեխային մոտենալու կամ երեխայի դպրոցական արձանագրություններին հասանելիություն ունենալու մյուս ծնողի իրավունքը:

Գլենդելի կրթաշրջանի բոլոր դպրոցները, երեխայի խնամակալության հարցում, կհետևեն դատարանի կողմից տրված ամենավերջին փաստաթղթին, իսկ փաստաթղթի բացակայության դեպքում Կալիֆոռնիայի օրենքը, ինչպես նշվեց վերը, յուրաքանչյուր ծնողի տալիս է երեխային խնամելու հավասար իրավունք:

Ծնողներից խնդրվում է խուսափել և դպրոցի անձնակազմին չներառել երեխայի խնամակալության հարցերով վեճերին: Եթե ծնողը համոզված չէ, թե արդյոք դպրոցն ունի իր երեխայի խնամակալության հարցով վերջին տեղեկությունները, նա պետք է կապ հաստատի դպրոցի հետ և ստուգի, որ դպրոցին տրամադրվել է դատական ամենավերջին հրահանգների պատճենները:

**ԿԱՐԴԱՑԵՆ ՈՒ ՀԱՍԿԱՑԵՆ ԵՄ ՎԵՐԸ ՆՇՎԱՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ:**

-----  
-----  
-----

Ծնողի/խնամակալի անունը	Ստորագրությունը	Ամսաթիվը
------------------------	-----------------	----------

**ՅՈՒՐԱՔԱՆՁՑՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ  
ՍՏՈՐԱԳՐՎԱՍ ԱՑՍ ՖՈՐՄԸ՝ ՍՏԱՑԱՍ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

**ՖՈՐՄ 4 – ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (EIS) ՊԱՏՇԱՃ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ  
ԿՐԹԱՇՐՋԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏ  
ԱՐՁԱԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
2019-2020**

**Տորմ 4-ը** պետք է լրացնեն Գլենդելի հանրային դպրոցների ԲՈԼՈՐ աշակերտների ծնողները կամ խնամակալները և (1) վերադարձնեն աշակերտի դպրոցի գրասենյակը ԿԱՄ (2) լրացնեն աշակերտի տարեկան տեղեկատվական արդիականացման բաժին անցանց ParentConnection-ում:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը աշակերտներին թույլատրում է օգտագործել կրթաշրջանում տրամադրվող տեխնոլոգիան կրթական նպատակներով: Կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործումը կրթաշրջանի հայեցողությամբ տրված արտոնություն է և ենթակա է կրթական խորհրդի ֆաղափակման և վարչական կանոնակարգերի և այս «Պատշան օգտագործման պայմանագիր»-ում նշված պայմաններին և սահմանափակումներին: Կրթաշրջանը իրեն իրավունք է վերապահում կասեցնել համակարգը օգտագործող աշակերտների արտոնությունը որևէ ժամանակ առանց նախազգուշացման և առանց որևէ պատճառի:

Կրթաշրջանը բոլոր աշակերտներից ակնկալում է պատասխանատու կերպով օգտագործել տեխնոլոգիան խնդիրներից և պատասխանատվությունից խուսափելու համար: Կրթաշրջանը կարող է չափավոր սահմանափակումներ դնել կայքերի, նյութերի և/կամ տեղեկությունների վրա, որ աշակերտները կարող են համակարգի միջոցով մուտք գործել:

Կրթաշրջանի տեխնոլոգիան օգտագործող յուրաքանչյուր աշակերտ և նրա ծնողը/խնամակալը պետք է ստորագրեն «Պատշան օգտագործման պայմանագիր»-ը, առ այն, որ նրանք կարդացել և հասկացել են պայմանագիրը:

Սահմանումներ՝ Կրթաշրջանի տեխնոլոգիան ներառում է, բայց չի սահմանափակվում, համակարգիչներ, կրթաշրջանի համակարգչային ցանց, ներառյալ՝ services and wireless computer networking technology (wi-fi), ինտերնետ, Էլ-Փոստ (միայն 9-12-րդ դասարանի աշակերտների համար), USB drives, wireless access points (routers), tablet համակարգիչներ, սմարթֆոններ և սմարթ սարքեր, հեռախոսներ, բջջային հեռախոսներ, անձնական թվային օգնականներ (digital assistants), փեյջեր, MP3 players-ը Գործածելի (կրելի) տեխնոլոգիա, հաղորդակցության որևէ անլար սարք, ներառյալ արտակարգ իրավիճակների համար օգտագործվող ռադիոներ, և/կամ ապագա տեխնոլոգիայի նորածնություններ, դպրոցում կամ դպրոցից դուրս օգտագործվող կրթաշրջանի կան անձնական գործիք կամ սարք:

Աշակերտի պարտավորությունները և պատասխանատվությունները՝ Աշակերտներից ակնկալվում է կրթաշրջանի տեխնոլոգիան օգտագործել ապահով և պատասխանատու կերպով և միայն կրթական նպատակներով: Այն աշակերտը, ով կրթաշրջանի տեխնոլոգիան օգտագործելու արտոնություն է ստացել, պատասխանատու է տեխնոլոգիայի պատշան օգտագործման համար: Աշակերտները չպետք է ինֆնությունը հաստատող և թույլտվության նպատակով օգտագործվող տեղեկությունները, գաղտնաբառը կամ այլ տեղեկությունները հայտնի ուրիշներին և միայն իրեն նշանակված տեղեկագրով օգտագործի համակարգը:

Աշակերտներին արգելվում է կրթաշրջանի տեխնոլոգիան անպատշան նպատակներով օգտագործել, ներառյալ, բայց ոչ սահմանափակված, հետևյալ կիրառումները՝

1. Մուտք գործել, փակցնել, ցուցադրել կամ այլ կերպ ասած խտրական, դժամ, զրպարտող, անպարկեշտ, սեռական կամ խանգարող նյութեր օգտագործել:
2. Կովարարություն, ռոնձգություն, վախեցնել կամ սպառնալ այլ աշակերտներին, անձնակազմին կամ այլ անհատներին (“cyberbullying”):
3. Բացահայտել, օգտագործել կամ տարածել մեկ այլ աշակերտի, անձնակազմի կամ այլ անհատի անձնական նույնականացման տեղեկությունները (օրինակ՝ անունը, հասցեն, հեռախոսահամարը, սոցիալ ապահովության համարը և այլ անհատական տեղեկություններ), այդ անձին սպառնալու, ահաբեկելու, ռոնձահարելու կամ ծաղրելու նպատակով:
4. Հեղինակային իրավունքի, լիցենզիայի, ապրանքանիշի, արտոնագրի կամ այլ մտավոր սեփականության իրավունքների խախտում:

5. Մտածված վնասել կրթաշրջանի տեխնոլոգիան կամ գործողությունները (օրինակ՝ փչացնել կրթաշրջանի սարքերը, համակարգիչներում վիրուս տեղադրել, առանց ուսուցչի կամ կրթաշրջանի որևէ անձնակազմի թույլտվության համակարգչային ծրագիր ավելացնել կամ հանել, համատեղ օգտագործվող համակարգիչների setting-ը փոխել):
6. Զբույսատրված սոցիալական ցանցերի տեղադրել:
7. Գաղտագողի համակարգ մտնել կրթաշրջանի կամ այլ օգտագործողների տեղեկությունները շահագործելու համար:
8. Ներգրավել կամ խրախուսել անբարոյական գործողություն կամ խախտել որևէ օրենք կամ կրթական խորհրդի ֆաղափականությունը վարչական կանոնակարգը և կրթաշրջանի աշխատանքները:

Գաղտնիություն՝ Բանի որ կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործումը նախատեսված է ուսումնական նպատակների համար, ուստի աշակերտները չպետք է կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործման համար գաղտնիության ակնկալիք ունենան:

Կրթաշրջանը իրավունք է վերապահում վերահսկել և արձանագրել կրթաշրջանի տեխնոլոգիայի բոլոր կիրառումները, ներառյալ, բայց ոչ սահմանափակված, ինտեռնետը, սոցիալական լրատվական միջոցները, հաղորդագրություններ ուղարկելը և ստանալը կամ այլն: Այսպիսի վերահսկում/արձանագրություն, իրավական նպատակներով, կարող է տեղի ունենալ ցանկացած պահի, առանց նախագուշակման, ներառյալ, բայց ոչ սահմանափակված, գրառումների պահպանում և բաշխում, և/կամ ոչ պատշաճ, անօրինական և արգելված գործողությունների հետաքննության համար: Աշակերտները պետք է տեղյակ լինեն, որ շատ դեպքերում, կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործումը (ինչպես օրինակ՝ ցանցերի որոնումները և էլեկտրոնային նամակները) չեն կարող ջնջվել կամ մաքրվել: Կրթաշրջանի տեխնոլոգիայի համար ստեղծված կամ օգտագործված բոլոր գաղտնաբառերը կրթաշրջանի սեփականությունն են: Կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործման համար աշակերտի ստեղծած գաղտնաբառը գաղտնիություն չի ստեղծում:

Անձնական սարքեր՝ Եթե աշակերտը անձնական սարքը օգտագործում է կրթաշրջանի տեխնոլոգիան օգտագործելու համար, նա պետք է պահպանի կրթական խորհրդի ֆաղափականության և վարչական կանոնակարգերի և «Պատշաճ օգտագործման պայմանագիր»-ում նշված պայմաններին և սահմանափակումներին: Անձնական սարքի այսպիսի օգտագործումը կարող է ենթարկվել բովանդակության և հաղորդագրությունների բացահայտմանը օրենքով սահմանված կարգով կամ հանրային գրառումների պահանջով:

Զեկուցում՝ Եթե աշակերտը անվտանգության որևէ խնդրի (օրինակ՝ մուտքի կամ հաշվի տեղեկության գաղտնիության փոխզիջման) կամ կրթաշրջանի տեխնոլոգիայի չարաշահման մասին տեղեկանում է, նա պետք է անմիջապես հայտնի ուսուցչին կամ կրթաշրջանի որևէ աշխատակցի:

Խախտման հետևանքները՝ Օրենքի, կրթական խորհրդի ֆաղափականության և այս պայմանագրի կանոնների խախտումները կհանգեցնեն կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործման արտոնության վերացմանը և/կամ կարգապահական միջոցների, ներառյալ կախակայում կամ հեռացում: Բացի դրանից, օրենքի, կրթական խորհրդի ֆաղափականության և այս պայմանագրի կանոնների խախտումները կարող է զեկուցվի իրավապահ մարմիններին ըստ պատշաճության:

Ծնողի կամ ինամականի հաստատում՝ Որպես այս աշակերտի ծնող/ինամական, կարդացել, հասկացել և համաձայն եմ, որ իմ երեխան պետք է պահպանի «Պատշաճ օգտագործման պայմանագիր»-ում նշված պայմանները: Այս պայմանագիրը ստորագրելով, թույլ եմ տալիս իմ երեխային օգտագործել կրթաշրջանի տեխնոլոգիան և/կամ դպրոցի համակարգչային համացանցը և ինտերնետը: Ես հասկանում եմ, որ չնայած կրթաշրջանի լավագույն ջանքերի, հնարավոր չէ սահմանափակել բոլոր վիրավորական և հակասական նյութերի հասանելիությունը: Ես համաձայն եմ դպրոցին, կրթաշրջանին և կրթաշրջանի աշխատակիցներին ազատ արձակել բոլոր պահանջներից, վնասներից և ծախսերից, որը կարող է առաջանալ կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործումից կամ կրթաշրջանի պաշտպանության միջոցների չկատարման հետևանքով: Ավելին, ես պատասխանատվություն եմ ստանձնում, տանը վերահսկել իմ երեխայի տեխնոլոգիայի օգտագործումը:

<b>(Տպագիր գրել)</b> Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
Ծնողի կամ ինամականի ստորագրությունը		Ամսաթիվը	

**ՖՈՐՄ 5 – 24-ԺԱՄՅԱ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
2019-2020**

**Ճորձ 5-ը** պետք է լրացնեն այն ծնողները, որոնց երեխաները դեղորայք են օգտագործում տանը և այս ֆորմը լրացրած պետք է վերադարձնեն դպրոցի առողջապահության գրասենյակ:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
<u>Դեղի անունը</u>	<u>Դեղաբանակը</u>	<u>Դեղի օգտագործման պատճառը</u>	<u>Օգտագործման ժամերը</u>
1. -----	-----	-----	-----
2. -----	-----	-----	-----

Բժշկի անունը \_\_\_\_\_ Հասցեն \_\_\_\_\_ Հեռախոսահամարը \_\_\_\_\_

Սրանով հաստատում եմ, որ իմ համոզմամբ, վերոհիշյալ տեղեկությունները ճիշտ են: Ուստի թույլատրում եմ, որ դպրոցի բուժֆուլյոր խորհրդակցի երեխայիս բժշկի հետ՝ վերոհիշյալ դեղորայքի օգտագործման հետևանքների, վնասակար ազդեցությունների ու փտանշանների, դեղերը դադարեցնելու կամ դրանք չափից շատ օգտագործելու մասին:

Ծնողի կամ ինամակալի ստորագրությունը \_\_\_\_\_ Ամսաթիվը \_\_\_\_\_  
 Հասցեն \_\_\_\_\_ Հեռախոսահամարը \_\_\_\_\_

Եթե դեղը պետք է օգտագործվի դպրոցում, ձեր բժիշկը պետք է լրացնի ու ստորագրի Form No. HS25 «Request for Medication to be Taken During School Hours» ֆորմը, որը կարող եմ ստանալ դպրոցից: Եթե փոխվի դեղը, դեղաբանակը կամ դեղի օգտագործման ժամերը, դպրոցին պետք է ներկայացվի նոր խնդրագիր:



**ՖՈՐՄ 6 – ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ԶՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ  
2019-2020**

**Ճորձ 6-ը** պետք է լրացնեն միայն այն ծնողները, ովքեր չեն ցանկանում, որ իրենց երեխան մասնակցի մարդկային վերաբուժում (էման բըպրոդուչտիոն) ուսուցմանը և պետք է այս ֆորմը լրացրած վերադարձնեն դպրոցի գրասենյակ:

Խնդրում եմ, որ երեխաս՝

-----

(Տպագիր գրել) Աշակերտի անունը \_\_\_\_\_ ID համարը \_\_\_\_\_ Դպրոցը \_\_\_\_\_ Դասարանը \_\_\_\_\_

չմասնակցի հետևյալ թեմաներին վերաբերող ուսուցմանը՝  
 -----  
 հետևյալ դասընթացներին՝  
 -----

Հասկանում եմ, որ այս ուսուցմանը չմասնակցող աշակերտները կներկայանան գրադարան կամ ընթերցասրահ:

Ծնողի կամ ինամակալի ստորագրությունը \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_

**ՖՈՐՄ 7 – ԹՈՒՅՏՎՈՒԹՅԱՆ՝ ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՈՒՆԸ,  
ԼՈՒՍԱՆԿԱՐԸ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՎԻԴԵՈ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ  
ԶԱՆԱԶԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ  
2019-2020**

**Տորմ 7-ը** կարելի է ծնողի կամ խնամակալի ցանկությամբ որևէ ժամանակ թարմացվել: **Թույլտվության այս ֆորմերն ի գործու կմնան այնքան ժամանակ, որ ձեր երեխան հաճախի Գլենդելի հանրային դպրոցները:** Դա կարելի է ցանկացած ժամանակ փոփոխության ենթարկել՝ կապվելով երեխայի դպրոցի հետ: Այս ֆորմը վերադարձրե՛ք ձեր զավակի դպրոցը:

(Տպագիր գրել) Աշակերտի անունը                              ID համարը                              Դպրոցը                              Դասարանը

Այս թերթիկով *թույլատրվում է* կամ *բացառվում է*, որ աշակերտի անունը, լուսանկարը և կամ վիդեո պատկերները օգտագործվի՝ լրագրերի, դպրոցի/կրթաշրջանի կայքէջի, սոցիալական լրատվամիջոցների և գանազան հրատարակությունների համար (օրինակ՝ դպրոցի տեղեկատու), որոնք լուսանկարվել կամ տեսագրվել են լրատվամիջոցների, կրթաշրջանի/դպրոցական խմբերի կամ կրթաշրջանի վավերացմամբ այլ խմբերի կողմից:

Աշակերտները, երբեմն լուսանկարվում կամ տեսագրվում են լրատվամիջոցների կողմից՝ ծնողներին ու համայնքին տեղյակ պահելու ուսումնական ծրագրերի, ելույթների ու ծրագրերի մասին: Կրթաշրջանը, նահանգային օրենքի համաձայն, համագործակցում է լրատվամիջոցների հետ, թույլ տալով, որ նրանց ներկայացուցիչները ներկայանան մեր դպրոցները և լրատվության նպատակով լուսանկարեն կամ տեսագրեն աշակերտներին: Աշակերտները կարող են նաև լուսանկարվել կամ տեսագրվել դպրոցական շրջանակում՝ նրանց գնահատման ու պարգևատրման հանդեսի, ուսուցման ծրագրերի, իրադարձությունների, գովազդային պլակատների, կրթաշրջանի կայքէջերի, լրագրերի և ուսումնական խորհրդի ելույթների ընթացքում:

**Կրթաշրջանը հարգում է աշակերտների ու նրանց ընտանիքների տեղեկությունները գաղտնի պահելու իրավու՛թքը:** Խնդրվում է ներքևի տնակներից ընտրել Այո կամ Ոչ պատասխանը:

----- Այո, **թույլատրում եմ**, որ երեխայիս անունը, ազգանունը, լուսանկարը կամ վիդեո պատկերը օգտագործվի վերոհիշյալ հրատարակություններից և լրատվական միջոցներից որևէ մեկի կամ բոլորի մեջ:

----- Այո, **դպրոցի հրատարակության համար միայն**. Թույլատրում եմ, որ երեխայիս անունը, ազգանունը, լուսանկարը կամ վիդեո պատկերը օգտագործվի միայն դպրոցի հրատարակությունների համար (տարեգիրք և դպրոցական թերթ):

----- Ոչ, **չեմ** **թույլատրում** բացահայտել երեխայիս տեղեկությունները: Չեմ **թույլատրում**, որ օգտագործվի երեխայիս անունը և չեմ **թույլատրում** նրան լուսանկարել կամ նրանից վիդեո վերցնել որևէ հրատարակության կամ լրատվական միջոցների, ներառյալ՝ տարեգիրքի և դպրոցական թերթի համար:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը

Ամսաթիվը

Նշում՝ Այս ֆորմի դպրոց չվերադարձնելը նշանակում է, որ դուք դպրոցին/կրթաշրջանին **թույլատրում եք** ձեր երեխայի անունը, լուսանկարը և վիդեո պատկերները օգտագործել բոլոր հրատարակությունների և լրատվամիջոցների համար:

**ՖՈՐՄ 8 – ԶԻՆՇԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ, ԳՈՐԾԱՏԵՐԵՐԻՆ, ԿՈՒԵՋՆԵՐԻՆ ՈՒ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ, 11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ  
ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ  
2019-2020**

«Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի» (ԸՍՍԱ) օրենքի համաձայն, դպրոցների կրթաշրջանից պահանջվում է՝ զինծառայությանը, գործատերերին, կուլեջներին ու համալսարաններին տրամադրել **ավագ դպրոցի բոլոր 11-րդ և 12-րդ դասարանների** աշակերտների անունները, հասցեներն ու հեռախոսահամարները:

Եթե **ավագ դպրոցի 11-րդ կամ 12-րդ դասարանի** աշակերտ ունեք և **չեք** ցանկանում, որ Գլենդելի կրթաշրջանը բացահայտի ձեր 11-րդ և 12-րդ աշակերտների տեղեկությունները, խնդրում ենք լրացնել ստորև նշված տեղեկությունները, ստորագրել և այն **վերադարձնել ձեր գավալի տնօրենի գրասենյակը**: Եթե ձեր երեխան 18-ը լրացրել է, նա ինքը պետք է ստորագրի այս թերթիկը, ծնողի կամ օրինական խնամակալի փոխարեն: Այս թերթիկը չի վերաբերում ձեր 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտին: Խնդրում ենք այս թերթիկը **չվերադարձնել**, եթե ձեր երեխան 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտ է:

Խնդրում ենք այս ֆորմը մինչև **Ուրբաթ, 2019 թ. Հոկտեմբերի 4-ը** վերադարձնել **դպրոց**, այլապես բոլոր տեղեկությունները զինծառայությանը կտրամադրվեն **Ուրբաթ, 2019 թ. Հոկտեմբերի 11-ին**:

Եթե հարցեր ունեք, խնդրվում է կապվել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի հետ (818) 241-3111 ներքին 1285 հեռախոսահամարով:



**11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ**

Խնդրվում է ստորև տպագիր գրել **ԲՈՂՈՐ** տեղեկությունները:

-----

<b>(Տպագիր գրել)</b> Աշակերտի անունը	ID համարը	Դպրոցը	Դասարանը
--------------------------------------	-----------	--------	----------

Խնդրում եմ գավալիս անունը, հասցեն և հեռախոսահամարը, առանց իմ գրավոր համաձայնության չբացահայտել հետևյալներին (նշել մեկը կամ բոլորը)՝

- Միացյալ նահանգների զինծառայությանը
- Գործատերերին
- Գույեջներին և կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին

Ծնողի ստորագրություն -----

Աշակերտի ստորագրություն -----

**(ՄԻԱՅՆ եթե 18-ը լրացրած է)**



**ՖՈՐՄ 9 – ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՈՐՈՆՑ ԾՆՈՂՆԵՐԸ ԶԻՆԾԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ԱՆԴԱՄ ԵՆ 2019-2020**

**Ճորձ 9-ը** պետք է լրացնեն միայն այն ծնողները, ովքեր զինծառայության մեջ են և վերադարձնեն դայրոցի գրասենյակ:

-----

<b>(Տպագիր գրել)</b> Աշակերտի անունը	ID համարը	Դայրոցը	Դասարանը
--------------------------------------	-----------	---------	----------

«Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի» (ԸՍՍԱ) օրենքի համաձայն պետք է տվյալներ ներկայացնել այն աշակերտների համար, որոնց ծնողները զինծառայության (ցամաքային, ռազմածովային, օդային, նավատորմային կամ առափնյա պահակախումբ) մեջ են կամ ազգային պաշտպանության զորախմբի անդամ են:

Եթե դուք զինծառայության մեջ եք, խնդրվում է նշել ներքևի տնակներից մեկը և հայտնել սկսելու և ավարտելու ամսաթիվը (եթե գիտեք):

- Ցամաքային (Army)
- Ռազմածովային (Navy)
- Օդային (Air Force)
- Նավատորմային (Marine Corps)
- Առափնյա պահակախումբ (Coast Guard)
- Ազգային պաշտպանության զորախումբ (National Guard)

-----

Սկսելու ամսաթիվը	Ավարտելու ամսաթիվը (եթե գիտեք)
------------------	--------------------------------

-----

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվը
-------------------------------------	----------